Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 164 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրով նախատեսված է տեղադրել արևային ֆոտովոլտային կայաններ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան, Հրազդան, Եղվարդ և Չարենցավան համայնքներում, որտեղ բնակվում են մեծ թվով Արցախից տեղահան-ված ընտանիքներ: Միջոցառումների իրականացման արդյունքում, համայնքները կտնտեսեն գումարներ իրենց էներգետիկ ծախսերից, որը կուղղեն այդ ընտանիքներին աջակցելու նպատակին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապե-տության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Մակի Զարգացման Ծրագիր, Հայաստանում Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) Փոքր դրամաշնորհների ծրագիր (ՀՀ, Երևան, Ադամյան 14, ՀՎՀՀ՝ 02522088)
4.	Ծրագիրը կատարողը	«Սպիտակ-Ֆերմեր» գյուղատնտեսությանը աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպություն (հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, քաղ. Սպիտակ, Ալ. Մանուկյան 5/1, ՀՎՀՀ՝ 06804407)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է ՀՀ, Կոտայքի մարզի Աբովյան, Հրազդան, Եղվարդ և Չարենցավան համայնքներում, սոցիալական բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	69,183,720 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան, Հրազդան, Եղվարդ և Չարենցավան համայնքները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը իրականացվելու է 2021 թվականի մարտի 5-ից մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարա-գրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2021 թվականի մարտի 5-ից մինչև 2021 թվականի մայիսի 5-ը կատարել ընդհանուր 280 ԿՎտ դրվածքային հզորության, արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքներ՝ ընդհանուր 69,183,720 ՀՀ դրամ արժողությամբ: Մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ը իրականացնել մոնիտորինգ:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք են բերվելու հետևյալ ծառայությունները. • 70 ԿՎտ դրվածքային հզորության կայանի ձեռք բերում և տեղադրում ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի համայնքապետարանի տանիքին, արժեքը՝ 17,192,290 ՀՀ դրամ: • 30 ԿՎտ դրվածքային հզորության կայանի ձեռք բերում և տեղադրում ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի թիվ 1 մանկապարտեզի տանիքին, արժեքը՝ 7,307,400 ՀՀ դրամ: • 24 ԿՎտ դրվածքային հզորության կայանի ձեռք բերում և տեղադրում ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի համայնքապետարանի տանիքին, արժեքը՝ 5,802,760 ՀՀ դրամ: • 16 ԿՎտ դրվածքային հզորության կայանի ձեռք բերում և տեղադրում ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի թիվ 2 մանկապարտեզի տանիքին, արժեքը՝ 3,969,540 ՀՀ դրամ: • 20 ԿՎտ դրվածքային հզորության կայանի ձեռք բերում և տեղադրում ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի թիվ 16 նախաուսումնական հաստատության տանիքին, արժեքը՝ 4,904,750 ՀՀ դրամ: • 20 ԿՎտ դրվածքային հզորության կայանի ձեռք բերում և տեղադրում ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի թիվ 12 նախաուսումնական հաստատության տանիքին, արժեքը՝ 5,077,720 ՀՀ դրամ: • 30 ԿՎտ դրվածքային հզորության կայանի ձեռք բերում և տեղադրում ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի թիվ 13 նախաուսումնական հաստատության տանիքին, արժեքը՝ 7,112,950 ՀՀ դրամ: • 25 ԿՎտ դրվածքային հզորության կայանի ձեռք բերում և տեղադրում ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքի, Չարենցավան բնակավայրի, Գառզուի անվան արվեստի դպրոցի տանիքին, արժեքը՝ 6,245,020 ՀՀ դրամ: • 10 ԿՎտ դրվածքային հզորության կայանի ձեռք բերում և տեղադրում ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքի, Բջնի բնակավայրի, մշակույթի տան տանիքին, արժեքը՝ 2,723,480 ՀՀ դրամ: • 15 ԿՎտ դրվածքային հզորության կայանի ձեռք բերում և տեղադրում ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքի, Արզական բնակավայրի, հանդիսությունների սրահի տանիքին, արժեքը՝ 3,741,230 ՀՀ դրամ: • 20 ԿՎտ դրվածքային հզորության կայանի ձեռք բերում և տեղադրում ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքի, Ալափարս բնակավայրի, մշակույթի տան տանիքին, արժեքը՝ 5,106,580 ՀՀ դրամ: Պայմանագրի ընդհանուր արժեքն է 69,183,720 ՀՀ դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրով կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Դոնոր կազմակերպության մոնիտորինգային թիմի և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ ծրագրի ընթացքի և արդյունքների մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

03.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ